Հաստատում եմ՝ համայնքի

ղեկավար

ՔԱՂՎԱԾՔ

ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԹԻՎ 12 ՆԻՍՏԻ

Ք. ԱՐՄԱՎԻՐ 05.08.2021 թ. ժամը՝ 10^{30}

Արմավիրի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2021թ. օգոստոսի 5-ին կայացած թիվ 12 նիստին մասնակցում են՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Պողոսյան
Տեղակալ՝ Ա. Գրիգորյան
Անդամ՝ Հ. Ասատրյան
Քարտուղար՝ Ն. Խաչատրյան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1.Արմավիրի համայնքապետարան մուտքագրված Շանդուխտ Փաշայանի 2021 թվականի հուլիսի 26-ի թիվ 2621 դիմումը՝ իր ամուսնու՝ Մելսիկ Հայկի Խեչոյանի նկատմամբ օգնական (պատրոնաժ) նշանակելու մասին:

Զեկ.՝ Ռ. Պողոսյան

2.Արմավիրի համայնքապետարան մուտքագրված Տալիա Խաչատրյանի 2021 թվականի հուլիսի 23-ի թիվ 2603 դիմումը՝ իր թոռների՝ Ժիրայր Հրաչյայի Արշակյանի /ծնվ. 07.04.2007թ./ և Սարգիս Հրաչյայի Արշակյանի /ծնվ. 03.02.2004թ./ նկատմամբ հոգաբարձու և Տանյա Հրաչյայի Արշակյանի /ծնվ. 16.05.2011թ./ նկատմամբ խնամակալ նշանակելու մասին մեկ տարի ժամանակով:

Զեկ.՝ Ռ. Պողոսյան

1. Լսեցին -- Հանձնաժողովի նախագահ Ռ. Պողոսյանը ներկայացրեց Արմավիր քաղաքի Նալբանդյան փողոցի 35շ. 24 բնակարանի բնակիչ Շանդուխտ Պերճի Փաշայանի 2021 թվականի հուլիսի 26-ի թիվ 2621 դիմումը՝ իր ամուսնու՝ Մելսիկ Հայկի Խեչոյանի /ծնվ. 10.04.1940թ./ նկատմամբ օգնական (պատրոնաժ) նշանակելու մասին:

Դիմումին կից ներկայացվել են հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում
2. Շանդուխտ Փաշայանի անձնագրի պատճեն
3. Մելսիկ Խեչոյանի անձնագրի պատճեն
4. Ամուսնության վկայական
5. Շանդուխտ Փաշայանի առողջության մասին տեղեկանք
6. Քաղվածք ԲՍՓՀ փորձաքննության ակտից
7. Տեղեկանք ընտանիքի կազմի մասին

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝

1. Թույլատրել Շանդուխտ Փաշայանին իր ամուսնու՝ Մելսիկ Հայկի Խեչոյանի /ծնվ. 10.04.1940թ./ նկատմամբ օգնական (պատրոնաժ) նշանակելու:

2. Միջնորդել համայնքի ղեկավարին հաստատելու հանձնաժողովի որոշումը:

2. Լսեցին - Ռ. Պողոսյանը ներկայացրեց Աբովյան փողոցի 74 տան բնակիչ Տալիա Կնյազի Խաչատրյանի /ծնվ. 06.01.1949թ./ Արմավիրի համայնքապետարան մուտքագրված 2021 թվականի հուլիսի 23-ի թիվ 2603 դիմումը՝ իր անչափահաս թոռների Ժիրայր Հրաչյայի Արշակյանի /ծնվ. 07.04.2007թ./ և Սարգիս Հրաչյայի Արշակյանի /ծնվ. 03.02.2004թ./ նկատմամբ հոգաբարձու և Տանյա Հրաչյայի Արշակյանի /ծնվ. 16.05.2011թ./ նկատմամբ խնամակալ նշանակելու մասին մեկ տարի ժամանակով:

Դիմումին կից ներկայացվել են հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում
2. Տալիա Խաչատրյանի անձնագրի պատճեն
3. Ժիրայր, Սարգիս և Տանյա Արշակյանների ծննդյան վկայականների պատճենները
4. Սալիա ԽԽաչատրյանի առողջության մասին տեղեկանք
5. Ժիրայր, Սարգիս և Տանյա Արշակյանների առողջության մասին տեղեկանքներ
6. Ընտանիքի կազմի մասին տեղեկանք
7. Քրիստինե Արշակյանի անձնագրի պատժեն
8. Լիազորագիր նոտարի կողմից
9. Սարգիս և Տանյա Արշակյանների համաձայնագրերը
10. Տալիա Խաչատրյանի կողմից տրված հայտարարությունը
11. ՀՀ ԿԳՍՄՆ «Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջ» ՊՈԱԿ-ից տեղեկանք
12. Ժիրայր Արշակյանի առողջության մասին էպիկրիզ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

Սույն արձանագրությունը ներկայացնել Արմավիր համայնքի ղեկավարին՝ Տալիա Կնյազի Խաչատրյանին /ծնվ. 06.01.1949թ./ նշանակել իր անչափահաս թոռների Ժիրայր Հրաչյայի Արշակյանի /ծնվ. 07.04.2007թ./ և Սարգիս Հրաչյայի Արշակյանի /ծնվ. 03.02.2004թ./ նկատմամբ հոգաբարձու և Տանյա Հրաչյայի Արշակյանի /ծնվ. 16.05.2011թ./ նկատմամբ խնամակալ մեկ տարի ժամանակով:

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Պողոսյան

Քարտուղար՝ Ն. Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, , armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 օգոստոսի 2021 թվականի N 556-Ա

ՇԱՆԴՈՒԽԴ ՓԱՇԱՅԱՆԻՆ ՄԵԼՍԻԿ ԽԵՉՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՕԳՆԱԿԱՆ (ՊԱՏՐՈՆ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 9-րդ կետի 14-րդ ենթակետով և հիմք ընդունելով Արմավիրի համայնքապետարան մուտքագրված 26.07.2021 թվականի թիվ 2621 դիմումը, Արմավիրի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 5-ի թիվ 12 նիստի արձանագրությունը, **որոշում եմ՝**

1.Մելսիկ Հայկի Խեչոյանի /ծնվ. 10.04.1940թ./ նկատմամբ սահմանել քաղաքացու պատրոն (օգնական) Շանդուխտ Փաշայանին:
2.Շանդուխտ Փաշայանին վերապահել ի շահ իր ամուսնու Մելսիկ Հայկի Խեչոյանի, առանց հատուկ լիազորագրի կնքել անհրաժեշտ գործարքներ, հանդես գալ նրա իրավունքների ու շահերի պաշտպանությամբ ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ հարաբերություններում՝ ներառյալ դատարանում:
3.Որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ համայնքի ղեկավարի կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ ՀՀ վարչական դատարան:
4.Որոշումն ուժի մեջ է մտնում սույն որոշման ընդունման մասին դիմումատուին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2021թ. օգոստոսի 9
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, , armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 օգոստոսի 2021 թվականի N 555-Ա

ՏԱԼԻԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԺԻՐԱՅՐ ԱՐՇԱԿՅԱՆԻ ԵՎ ՍԱՐԳԻՍ ԱՐՇԱԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ԵՎ ՏԱՆՅԱ ԱՐՇԱԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 9-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով Արմավիրի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 5-ի թիվ 12 նիստի արձանագրությունը և քաղաքացի Տալիա Խաչատրյանի 2021 թվականի հուլիսի 23-ի թիվ 2603 դիմումը, **որոշում եմ՝**

1.Տալիա Կնյազի Խաչատրյանին /ծնվ. 06.01.1949թ./ նշանակել հոգաբարձու Ժիրայր Հրաչյայի Արշակյանի /ծնվ. 07.04.2007թ./ և Սարգիս Հրաչյայի Արշակյանի /ծնվ. 03.02.2004թ./ և հոգաբարձու Տանյա Հրաչյայի Արշակյանի /ծնվ. 16.05.2011թ./ նկատմամբ նկատմամբ մեկ տարի ժամանակով:

2.Տալիա Խաչատրյանին վերապահել ի շահ իր խնամարկյալի, առանց հատուկ լիազորագրի կնքել անհրաժեշտ գործարքներ, հանդես գալ նրանց իրավունքների ու շահերի պաշտպանությամբ ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ հարաբերություններում՝ ներառյալ դատարանում:

3.Որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ համայնքի ղեկավարին կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ՝ ՀՀ վարչական դատարան:

4.Որոշումն ուժի մեջ է մտնում սույն որոշման ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, որոնց ուղղված է սույն որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2021թ. օգոստոսի 9
ք. Արմավիր